

# Ցիանիդի կառավարում

## Ի՞նչ է ցիանիդը

Ցիանիդը քիմիական միացություն է, որը հանդիպում է պինդ, հեղուկ և գազային վիճակում: Արտադրական նպատակներով ցիանիդի կիրառումը իրականացվում է նատրիում ցիանիդի պինդ բրիկետների կամ խտացված լուծույթի ձևով:

- Ցիանիդի միացությունները բնության մեջ հանդիպում են աննշան քանակությամբ: Այն կուտակվող թույն չի համարվում և ոչ մահացու քանակները սովորաբար կորցնում են իրենց ազդեցությունը օրգանիզմի նյութափոխության ընթացքում:
- Որոշ պայմաններում ցիանիդը շատ թունավոր է, սակայն այն վտանգավոր է դառնում ոչ ճիշտ կառավարման դեպքերում:

## Ինչպես է կիրառվելու ցիանիդը Ամուլսարում

- Ցիանիդի լուծույթը նախատեսվում է օգտագործել ոսկին և արծաթը հանքաքարից կորզելու նպատակով կոյտային տարրավացման հրապարակը ոռոգելու ժամանակ:
- Օգտագործման համար նախատեսված ցիանիդը նախատեսվում է ձեռք բերել պինդ բրիկետների տեսքով՝ ելնելով դրանց տեղափոխման անվտանգությունից: Պինդ ցիանիդը այնուհետև լուծվելու է ջրում՝ տարրավացման հրապարակում այն օգտագործելու համար:
- Այնուհետև ցիանիդը թանկարժեք մետաղների կորզումից հետո ոչնչացվում կամ վերամշակվում է փակ ցիկլով՝ առանց որևէ արտահոսքի:

Նյութեր	Ցիանիդի պարունակություն
Ծխախոտի ծուխ	Մինչև 1600 ppm
Չոր աղ	Մինչև 350 ppm
Ոսկու արդյունահանում	Մինչև 200 ppm
Նուշ	26-100 ppm
Լոբի լիմայական	1-31 ppm
Սորգո	Մինչև 25 ppm
Կերակրի աղ	Մինչև 13 ppm

ppm = մասնիկ/միլիոն

### Ցիանիդի կառավարման միջազգային օրենսգիրք (ՑԿՄՕ)

ՑԿՄՕ ոսկու արդյունահանման բնագավառում կիրառվող օրենսգիրք է, որը պարտավորեցնում է ստորագրող կողմերին դրսևորել պատասխանատու մոտեցում ցիանիդի ձեռքբերման, փոխադրման, պահեստավորման և վերամշակման գործընթացների իրականացման ժամանակ: Համապատասխանության ապահովումը ենթակա է ստուգման անկախ աուդիտորների կողմից:

### Ցիանիդի օգտագործման հետ կապված հնարավոր ազդեցությունների կառավարումը Լիդիանի կողմից

- Հանքի նախագծումն ու շահագործումն իրականացվելու է Ցիանիդի կառավարման միջազգային օրենսգրքով սահմանված կարգով:
- Ծրագիրն ունի հատուկ Ցիանիդի կառավարման պլան, որը հասանելի է բոլորին և որը նախատեսում է մշտադիտարկման/ստուգման ընթացակարգեր ու հասարակության իրազեկման այցելություններ:

### Որ հնարավոր ազդեցություններն են լինելու հարատև

- Ցիանիդի՝ քիչ հավանական շրջակա միջավայր արտահոսքի դեպքում, այն արագորեն քայքայվում է սակավ թունավոր միացությունների: